ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարան, գյուղ Ջրառատ 1-ին փողոց շենք 2, հեռ. 098 919 523 Էլ. փոստ Jrarat.kotayq@mta.gov.am

21.08.2017թ. N 123
Ձեր ______________ N __________

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՐՈՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Պետրոսյան*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն ներկայացվում է Ջրառատ համայնքի ավագանու 2017թ. օգոստոսի 15-ի թիվ 9-րդ հերթական նիստի որոշումները:

Առդիր 7 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 31

### ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԹԻՎ 9-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով՝ *Ջրառատ համայնքի ավագանին **որոշում է**.*

1. Հաստատել Ջրառատ համայնքի ավագանու 2017թվականի օգոստոսի 15-ի 9-րդ հերթական նիստի օրակարգը

1/ Ջրառատ համայնքի կամավոր խնդիրների իրականացման կարգը սահմանելու մասին.

2/ Գույքը նվիրատնության կարգով տրամադրելու մասին.

3/ Ջրառատ համայնքում հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
2. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 32

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով՝ *Ջրառատ համայնքի ավագանին որոշում է.*

1. Սահմանել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը՝

1/ սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման նպատակով՝

ա/ մինչև 30 000 /երեսուն հազար/ դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին

բ/ 30 000 /երեսուն հազար/ դրամ գումարից ավելի ծախսի դեպքում հարցը քննարկել ավագանու նիստում:

2/ համայնքի տարբեր բնագավառներում սեփական լիազորություններն իրականացնել 2017թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին՝

ա/ մինչև 1 000 000 /մեկ միլիոն/ դրամ ծախս պահանջող աշխատանքների կատարումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ/ 1 000 000 /մեկ միլիոն/ դրամից ավելի ծախս պահանջող աշխատանքների կատարման դեպքում հարցը քննարկել ավագանու նիստում:

2. Ուժը կորցրած ճանաչել 2017 թվականի մարտի 16-ի <<Ջրառատ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 8 որոշումը:

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
2. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 33

### ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ *Ջրառատ համայնքի ավագանին **որոշում է.***

1. Ջրառատի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը / գրքերը/ սեփականության իրավունքով նվիրատվության կարգով հանձնել Ջրառատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ- ին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
2. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ